№ 12 ՈՒՐԲԱԹ, 20 ՅՈՒՆՎԱՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՈՒՐԲԱԹ, 20 ՅՈՒՆՎԱՐԻ № 12

Տարեկան գինը 10 ռ. [illegible]կէս տարվանը
և 7 ամսվան[illegible]բլի.
Առանձին համարները [illegible] ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում [illegible]բագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, [illegible]дакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1912 Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 50 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Հին բաժանորդներից խնդրվում է կցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“. Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ ֆրանսիական ժողովրդական միջոցը տարածելու նպատակով մենք վաճառում ենք փոքրիկ արկղիկներով, իւրաքանչիւրի մէջ

20 դեղհատ

ԳԻՆԸ 50 կոպէկ

КАСКАРА МИДИ

L. Midy

1—2 դեղհատ երեկոյեան՝ ընթրիքից առաջ։ Այդ արկղիկները, նոյնպէս և 50 դեղհատ պարունակողները, կարելի է ձեռք բերել բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։

(5,20) առ. (M. 337683) 962. 18—2

Ամենալաւը աշխարհում՝ սննդարարութեան և ախորժելի համի կողմից՝ համարվում են

ԴԷ-ՎԻԼԼԱՐԻ շվէյցարական ՇՕԿՕԼԱԴԸ և ԿԱԿԱՕՆ

Ֆրիբուրգում (Շվէյցարիա)

Վաճառվում են ամենուրեք։

Գլխաւոր ներկայացուցիչ՝ Վ. Դ. Կուլակօվսկի, Ելիսավէտպոլում։

(առ.) 1195. 10—9

ԲԱՑՎԱԾ Է

ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ՍԱՐԱՏՕՎԵԱՆ ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ „Ե. Ե. ՄԱՅԷՐԻ“

Երեւանեան հրապարակ, «Кавказъ» հիւրանոցի ներքեւը:

11. 1—1

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱՒՑԻ և սրտի: Սրսկումներ նաև տուբերկուլիններով: Ընդունելութիւնը ամեն օր՝ առաւօտեան ժամ 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը: Католическая ул. д. № 10. Տէլէֆօն № 792.

(ա.օ.) առ. 989. 100—79

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՆԱԴՍՈՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ռուսաստանի գրական աշխարհը անկեղծ համազգացութեամբ նուիրում է յարգանքի ձօներ իր վերջին խոշոր բանաստեղծ Նադսոնին, նրա մահվան 25-ամեակի առիթով։

Նադսոնը զգացմունք էր, խորաթափանց սէր էր, սրտայոյզ վիշտ էր։

Նրա բանաստեղծութիւնը շատ շուտ արձագանք գտաւ մարդկանց սրտերում, համակելով մարդկանց այն տրամադրութիւններով, որոնցով տոգորված էր դիւրազգաց բանաստեղծական ոգին։

Նադսոնը դարձաւ և հայ երիտասարդ սրտերի սիրելի հատորը։ Նրա քնարը ազդեց և հայկական բանաստեղծական գրականութեան վրա, ներշնչելով ազնիւ և մաքուր զգացմունքներ քնարերգական տաղասացներին, վշտակցութեան ողբերգուներին։

Նադսոնը մեռաւ շատ երիտասարդ հասակում, հազիւ 25 տարեկան, այն տարիներում, երբ նրա տաղանդը սկսել էր տալ հասուն գրուածքներ։ Մեռաւ հիւանդութիւնից, որը հետեւանք էր մասամբ իր թոյլ կազմուածքի և մեծ մասամբ այն ծանր կենսական պայմանների, որոնք բաժին էին ընկել նրան մանուկ հասակից։

Նադսոնը անց է կացրել Կովկասում մի քանի ամիսներ և յիշատակել է մեր երկիրը իր մի քանի գրուածքներում։

Երիտասարդ Ռուսաստանը շատ շուտ սիրեց և գնահատեց Նադսոնին և դրանով ստեղծեց նրա անուան շուրջը մի գրաւիչ ոգևորութիւն, որը միակ մխիթարութիւնն էր բանաստեղծի համար իր կեանքի սրտամաշ օրերում։

Նրա բանաստեղծական երկերի հաւաքածուն արժանացել է 25 հրատարակութեան և տարածվել է Ռուսաստանի բոլոր մասերում, դառնալով սիրելի նաև կովկասեան ազգերի համար։

Հայ գրականութեան մէջ կան թարգմանութիւններ Նադսոնից, տպագրված զանազան հանդէսներում։ Կան և նադսոնական նմանութիւններ։

Եւ այսօր, երբ ռուս գրական աշխարհը յիշում է սիրոյ և վշտի իր երգչին, յարգելով նրա թանգագին յիշատակը, մենք ջերմ զգացմունքով միացնում ենք մեր յարգանքի արտայայտութիւնը Նադսոնի բանաստեղծական ոգուն, որը տուել է այնքան գեղեցիկ ստեղծագործութիւններ գեղարուեստի աշխարհին։

Ա. Քալանթար

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

«Кав.»-ին հեռագրում են Պետերբուրգից, որ «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործի առիթով կանչված 1098 վկաներից եկել են միայն 142, որոնք բաժանված են 5 խմբակների։ Դատարանի կուլուարներում տիրում է մեծ հետաքրքրութիւն։

—

«Бирж. Вѣдом.» երեկոյեան թերթի ասելով, քաղաքական մեծ գործերի պրոցեսների օրից դատարանի շէնքը չէ տեսել այնպիսի պատկեր, որպիսին ներկայացնում է այսօր «Դաշնակցութեան» գործը։ Գործի հսկայականութիւնը հարկադրեց սենատին ձեռք առնել նախապատրաստական միջոցների մի ամբողջ շարան։ Նիստերի «Սպիտակ դահլիճը» ենթարկվեց մեծ փոփոխութիւնների, որպէսզի հնար լինէր տեղաւորել մեղադրեալներին և պաշտպաններին։ Մօտ 100 մեղադրեալներ գտնվում են արգելքի տակ, որոնց թւում նաև հայ բանաստեղծ Յովհ. Թումանեանը և գրող Դէզէնը(?). Մեղադրեալ դրամատէրերի թւումն է, օրինակ, Րօստովի հարուստ վաճառական Խլէբնիկեանը, Ա. Մելիք-Ազարեանը, իսկ պաշտպանների թւում, արդէն յիշածներից զատ, գտնվում են Անդրէեվսկի, Անդրոնիկով, Սուլամոնով-Էրիստով, Զարուդնի, Մարգուլիէս, Բերենշտամ, Ճերեբով և Բուտուրով։

Նիստերը տեղի են ունենում դռնփակ, սակայն վերնատանը 40 տեղ է յատկացված մեղադրեալների ազգականներին։

Լուրեր են պտտում, թէ հէնց որ նիստը բացվեց, պաշտպանները կը ներկայացնեն երկու յայտարարութիւն, մէկը նիստերը դռնբաց անելու մասին, իսկ միւսը՝ նախագահ Կրիվցովի հեռացման նկատմամբ, որովհետև վերջինս մօտ ազգական է ներքին գործերի մինիստրի օգնական Զօլոտարեւի, որը պրոկուրոր եղած ժամանակ կազմել է մեղադրական թուղթը։

—

«Դաշնակցութեան» գործի մասին «Руль» թերթի մէջ զետեղված է հետեւեալ յօդուածը.

Յունվարի 17-ին սենատում սկսվեց քննվել «Դաշնակցութիւն» հայ քաղաքական կուսակցութեան խոշոր գործը։

Այս գործով մեղադրվում են 159 մարդ, որոնք ձերբակալված են Թիֆլիսում, Վլադիկավկազում, Րօստովում և Հիւսիսային Կովկասի ու Անդրկովկասի այլ քաղաքներում։ Այս կուսակցութեան նպատակն է բռնի ոտնձգութիւններով փոփոխել հիմնական օրէնքներով Ռուսաստանում գոյութիւն ունեցող կառավարութեան ձևը և փոխարինել այն ֆեդերատիվ-դեմոկրատական հանրապետութեամբ, որի կազմի մէջ Կովկասը կը մտնի որպէս Ռուսաստանի դաշնակից մաս, որը կապված կը լինի Ռուսաստանի հետ միայն պետութեան պաշտպանութեան, արտաքին քաղաքականութեան, դրամական և մաքսային սիստեմի հարցերով, իր ներկայացուցիչներով համառուսական պարլամենտում, և Թիֆլիսը իր սեփական պարլամենտով։ Այս կուսակցութիւնը իր տրամադրութեան ներքոյ ունեցել է զինապահեստներ և պայթուցիկ նիւթերի պահեստատեղիներ և հրատարակել է յեղափոխական ամսագրեր, բրօշիւրներ, լրագիրներ և կոչեր զինված ապստամբութիւն առաջ բերելու նպատակով։

Կուսակցութիւնը դրամական միջոցներ ձեռք է բերել հայ ազգաբնակութեան վրա տարեկան հարկ դնելով, ընդ որում հարուստ մարդիկ պահանջը չը կատարելու դէպքում սպանվում էին։

Մեղադրեալներից ոմանք մեղադրվում են մի շարք տերրորիստական գործողութիւններ կատարելու մէջ, որոնք գործադրվել են ինչպէս իշխանութեան ներկայացուցիչների, նոյնպէս և մասնաւոր անձանց վերաբերմամբ, որոնք վտանգաւոր էին համարվում կազմակերպութեան համար և կամ չէին կամենում հնազանդվել նրա կարգադրութիւններին։

Այս նպատակով կազմակերպվում էին տերրորիստական խմբեր, որոնց տրվում էին զէնքեր և դրամական միջոցներ։ Այս գործով կանչված են աւելի քան 600 վկաներ։ Պաշտպանում են մեղադրեալներին Պետական Դումայի անդամ Մակլակով, Տեսլենկօ, Աջէմեան և երդւ.-հաւատարմատարներ՝ Կարաբչեվսկի, Մուրավիեվ, Գրուզենբերգ, իշխան Էրիստով, Զարուդնի, Անդրոնիկով և ուրիշներ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԻՒՐԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

18 յունվարի

Մոսկվա.—Եկան անգլիական հիւրերը և կայարանում դիմաւորվեցին քաղաքային վարչութեան անդամներից։ Ապա կայսերական սենեակներում դիմաւորեցին քաղաքագլուխը, ձայնաւորները, իշխանութեան և անգլիական գաղութի ներկայացուցիչները։ Քաղաքագլուխը մատուցեց աղ ու հաց և ողջոյնի ճառ արտասանեց։ Մոսկվայի միտրոպոլիտի կողմից ողջունեց քահանայ Պրէօբրաժէնսկին։ Պատասխանեց Ուէրդէլը։ Ժողովրդի ուրա աղաղակներով հիւրերը մեկնեցին «Ազգային հիւրանոցը», ուր մասնակցեցին անգլիական ակումբի կազմած նախաճաշին։

Նախաճաշի ժամանակ անգլիական հիւպատոսը խմեց Կայսրի կենացը՝ իբրև անգլո-ռուսական մերձեցման նախաձեռնողի. քաղաքագլուխն առաջարկեց Անգլիայի Թագաւորի կենացը իբրև ռուսաց Կայսրի բարեկամի։

Հիւրերը այցելեցին Մոսկվայի պաշտօնական անձերին, շրջեցին քաղաքը, այցելեցին Փրկչի տաճարը։

Այնուհետև անգլիացի հիւրերը այցելեցին քաղաքագլխին, որի մօտ թէյ էր պատրաստված. երեկոյեան տեղի ունեցաւ քաղաքային ինքնավարութեան խնճոյքը «Մոսկվայի մեծ հիւրանոցում»։ Կայսրի թանգագին առողջութեան համար առաջին բաժակն առաջարկեց քաղաքագլուխը, որը յետոյ խմեց անգլիական թագաւորի կենացը։ Երկու կենացներն էլ ընդունվեցին ցնծութեամբ։ Քաղաքագլուխը ճառեց երկու ժողովուրդների մերձեցման մասին։ Կոմս Ուէրդէլ ընդգծեց Պետերբուրգում և Մոսկվայում ցոյց տրվող ցնծագին ընդունելութիւնը և յայտնեց, որ այցելութիւնը կը նպաստէ փոխադարձ մերձեցման ու ազգերի սիրուն, և խմեց Ռուսաստանի ապագայի կենացը։ Ապա արտասանվեցին մի շարք բաժակաճառեր։ Քաղաքագլխի առաջարկութեամբ հեռագիր ուղարկվեց Լոնդոնի աւագ-քաղաքագլխին ուրախալի օրվայ առիթով։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

18 յունվարի

Պետերբուրգ.—Ստատս-սեկրէտար Երմոլովը բաղդ ունեցաւ ստանալու Կայսրից և Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայից հետեւեալ ամենաողորմած հեռագիրները.

Յանձնարարում եմ ձեզ հաղորդել Ալէքսանդրեան լիցէի ընկերական ճաշին ներկայ եղողներին անխտիր Իմ սրտանց շնորհակալութիւնը Ինձ արտայայտած հպատակութեան զգացմունքների համար։ Գոհունակութեամբ վերյիշում եմ այն յոբելեանական օրերը, որ Ես անցրի լիցէիստների ընտանիքի մէջ։

ՆԻԿՈԼԱՅ

Կայսրուհու հեռագիրը.

Անկեղծ բաւականութեամբ յիշում եմ Իմ անցրած ժամերը Կայսերական Ալէքսանդրեան լիցէի նախկին եւ այժմեան սաների մէջ հարիւրամեայ նրա գոյութեան առիթով. սրտանց շնորհակալ եմ ձեզանից, նախկին լիցէիստներից, վարչութիւնից, դասատուներից, դաստիարակներից եւ առաջին դասարանի սաներից այն զգացմունքների համար, որոնցից Ես խորապէս զգացված եմ։

ՄԱՐԻԱ

Յալտա.—Գեներալ Դումբաձէն Պալատի մինիստրից ստացաւ նամակ և նրա հետ Կայսրի և Գահաժառանգի, Կայսրուհու և բոլոր Օգոստափառ Զաւակների լուսանկարները սեփական ձեռքով արված մակագրութիւններով։

—

Պետերբուրգ.—Պաշտօնապէս հերքվում են մամուլում տարված լուրերը, թէ տարաձայնութիւններ են ծագել մինիստրների խորհրդի նախագահի և արդարադատութեան մինիստր Շչեգլովիտովի միջև, և թէ այդ պատճառով վերջինս հրաժարվելու է։

—

Ջուլֆա.—Առաջին հրացանաձիգ գունդը Թաւրիզից դուրս եկաւ Ռուսաստան գնալու համար։

—

Լիսաբոն.—Գործադուլի պատճառով Լիսաբոնի շրջանում յայտարարվեց պաշարողական դրութիւն։

—

Լիսաբոն.—Գիշերս ձերբակալվեցին մօտ 1000 մարդ։ Կօիմբրում գործադուլները յարձակվեցին մի գործարանի վրա և քարերով հանդիպեցին ոստիկանութեան։

Լրագիրները լոյս չը տեսան։ Կառավարութիւնը աւտոմոբիլներով դէպքերի ընթացքի մասին հաղորդագրութիւն ուղարկեց, որի մէջ ասված է, թէ սահմանադրական երաշխաւորութիւնները վերացնելուց յետոյ մի քանի վարկաբեկված անձինք կալանաւորված են։

Սինդիկալիստների պարագլուխների բնակարաններում գտնվեցին ռումբեր։ Սինդիկատի շէնքը շրջապատվեց հեծելազօրով։ Սինդիկալիստներին առաջարկված է անձնատուր լինել մի քառորդ ժամում։ Նրանք անձնատուր եղան։ Նրանցից մօտ 60 հոգու ուղարկեցին պատերազմական դատարան։ Շարժումը—ասված է հաղորդագրութեան մէջ—պահպանվում է միապետականների փողերով։ Տրամադրութիւնը քաղաքում աւելի խաղաղվեց, երբ պարզվեց զօրահրամանատարի ձեռք առած միջոցների աջողութիւնը։

—

Բիզէրտա.—Մի փոքր նաւատորմ դիմեց դէպի Թունիսի հարաւային ափը։ Կարծում են, որ նաւատորմը պաշտօն ունի կոնտրաբանդի առաջն առնել։

—

Վիէննա.—Համալսարանի 150 խորվատ և այլ սլաւօն ուսանող փորձեցին ցոյց սարքել ունգարական մինիստրութեան շէնքի առաջ, բայց ոստիկանութիւնը ցրեց նրանց։ Ցոյցի պատճառը խորվատական սէյմի արձակումն է։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

18 յունվարի

Պեկին.—Սունեատսէնը պատրաստակամութիւն յայտնեց հրաժարվել նախագահութիւնից յօգուտ Իւանշիկայի։ Այդ առիթով վայվուբուն հաղորդում է, որ Իւանշիկայը երբեք հետամուտ չէ եղել նախագահ լինելու և այդ մտքով էլ բանակցութեան մէջ չէ մտել յեղափոխականների հետ։

—

Պեկին.—Գիշերս Պեկին-Խանկօու երկաթուղագծի վրա զինուորական գնացքը Վանսիան կայարանի մօտ արագ երթալու ժամանակ ընդհարվեց հետեւող զինուորական գնացքին։ Կան շատ սպանված և վիրաւոր։

Ցիանցզինում ռումբերով անաջող փորձեր են արել պայթեցնելու փոխարքայի և զօրահրամանատարի տները։ Ազգաբնակութիւնը չափազանց անհանգիստ է։

—

Պեկին.—Այրի կայսրուհին թոյլատրեց Իւանշիկային ընդունել շնորհված տիտղոսը, երբ ընդհանուր դրութիւնը... (հեռագիրը աղաւաղված է)։

Զինուորական իշխանութիւնները միջոցներ են մշակում կարգ ու կանոնը մայրաքաղաքում և գաւառներում պաշտպանելու դինաստիայի գահից հրաժարվելու դէպքում։

Իւանշիկային հաւատարիմ զօրքերը շարունակում են կենտրոնանալ Պեկինում։

Չիֆու.—Նոր եկած նահանգապետը ինքնակոչ երևաց։

Տեղի են ունենում նոր նահանգապետի ընտրութիւններ։

—

Չիֆու.— Ձերբակալված ինքնակոչ նահանգապետն աքսորվում է Շանխայ։ Տեղական վաճառականների տեղեկութիւնների համաձայն, Վանսիանից հարաւ յեղափոխականները ջարդվել են։

—

Խանկօու.—Կայսերական զօրքերը մօտենում են Սեաօգանին։ Յեղափոխականները կրկնակի փորձեցին յօդս ցնդեցնել ուժանակով փոխարքայի գնացքը։

Գեներալ Լիւանխուէնը տեղեկացրեց հիւպատոսական մարմնին, որ զինադադարը վերջանալուց յետոյ երկաթուղին չէ կարող չէզոք մնալ. Նրանից օգտվելու են պատերազմական նպատակների համար։

—

Մուկդէն.—Յեղափոխական պրօպագանդայի մէջ կասկածվող մի քանի ճապօնացիների կալանաւորութեան առիթով քաղաք մտաւ ճապօնական մի զօրամաս ճապօնացիների կեանքն ու գոյքը պաշտպանելու համար։

Ջժանցզօլինը շարունակում է տանջանքների ենթարկել ու մահացնել յեղափոխութեանը համակրողներին։ Յունվարի 17-ին և 18-ին գլխատվեցին 37 մարդ։

Քաղաքում տիրում է մեծ յուզմունք. փակված է առևտրական հաստատութիւնների մի մասը։ Շատերը հեռանում են քաղաքից։

Փոխարքան յայտարարում է՝ թէ միջոցներ է ձեռք առել սահմանափակելու Ջժանցզօլինի կամայականութիւնները և պաշտպանելու լօյեալ տարրերի կեանքը։

—

Մուկդէն.—Պալատում գտնվող հարստութիւնների գրաւականով Ջժաօերխինը առաջարկում է 5 միլիոնի փոխառութիւն կնքել գերմանացի վաճառականների մօտ։ Յեղափոխականները հեռագրով խնդրեցին Մուկդէնի գերմանական հիւպատոսին արգելք լինել փոխառութեանը ու չէզոք մնալ։

Հարաւ-մանջուրական երկաթուղագծի Տէլին կայարանը այրվեց։

—

Տօկիօ.— Պատասխանելով հարցապնդման, արտաքին գործերի մինիստրը ընդունեց, որ Ինժուանը սկզբում մասնաւոր կերպով խորհուրդ տուեց յեղափոխականներին ընդունել սահմանադրութիւնը։ Զինուորական մինիստրը յայտնեց, որ ծառայութեան երկամեակը բաւարար երևաց։

ԴԷՊՔԵՐԸ ԹԱՒՐԻԶՈՒՄ

—

Թաւրիզ, 9 յունվարի

Զինված ընդհարումները վերջացել են արդէն, ճիշդ է, սակայն քաղաքն իր նորմալ դրութեան մէջ չէ. ահը, սարսափը չէ վերացել. դաշտային ատեանը իր գոյութեան և ույժի մէջն է։ Մինչև օրս կախվողների թիւը 25-ից անցաւ, որոնցից 3—4-ը Շուջա-ուդ-Դօվլէի կախածներն են։ Դեռ կը շարունակվեն, քանի կը ճարվեն խոշտանգված, այլանդակված ռուս զինուորի դիակները։ Ութ օր առաջ մի պարսկի տան արտաքնոցի հորից գտան 8 դիակ, և տնատէրերը 24 ժամից յետոյ կախաղան բարձրացան. իսկ տները, ըստ սովորութեան ցրիւ տրվելուց յետոյ, հիմնայատակ կործանվեցին։ Ասում են՝ տակաւին 12 զինուորների դիակներ չը կան և հապճեպով որոնվում են։ Անընդհատ պտոյտներ են գործում նաև օֆիցէրների հետ եղող խուզարկու շները։

Նահանգապետ Շուջա-ուդ-Դօվլէի պաշտօնը տակաւին չը հաստատվեց կենտրոնից, և մինչև այսօր հիւպատոսները չը գնացին շնորհաւորութեան։ Շատ անյայտ է երկրի վիճակը. խօսվում է, որ Ատրպատականի նահանգապետ է նշանակվել Սիփեհդարը. Երբ է գալու, ինչ պայմաններով, ինչ կը լինի Շուջա-ուդ-Դօվլէն, ոչ ոք գիտէ. միւս կողմից ներկայ նահանգապետը գործում է լիազօրի իրաւունքներով։

Անջուման, այլևս, քաղաքային վարչութիւն գոյութիւն չունին։ Անուանական կերպով բաց է քարգուզարիան։ Շահերի օրով եղածի պէս՝ կայ բէյլէր-բէյին (ոստիկանապետը), իսկ հայոց թաղերում՝ ղալա-բէյին։ Շահականները աներկիւղ երևան են եկել և առաւել խրոխտ են։

Արտաքոյ Ատրպատականի հայ հասարակութեան համար խիստ հետաքրքրական կը լինի, թէ արդեօք ինչ ճակատագիր ու վիճակ է սահմանվել Ատրպատականում և առաւել Թաւրիզում ապրող մի բուռ հայութեան համար. մանաւանդ այդ ընդ այլոյ տեղեկութիւններ պակաս չեղան հայ և օտար մամուլի մէջ։

Ռուս-պարսկական ընդհարումներից առաջ Թաւրիզում հայ հասարակութիւնն ընդհանրապէս և ներքին կռիւներում մասնակցող մարտիկները մասնաւորապէս ընդունել էին սկզբունքով ոչ մի միջամտութիւն և մասնակցութիւն չունենալ, այլ մնալ չէզոք և բարեկամ երկու կողմերի համար ևս. թէպէտ թուրքեր շատ եղան, որ հայերից պահանջեցին մասնակցութիւն, սակայն հայերը անդրդուելի մնացին իրանց որոշման վրա և մինչև վերջը հանդէս չեկաւ մի հայի ակտիվ միջամտութիւնը կռիւների ժամանակ։ Կռիւների երկրորդ օրն էր, որ ռուսաց հիւպատոս Միլլէր իր մօտ հրաւիրեց առաջնորդական փոխանորդ կարապետ քահանային և զեկուցեց, որ հայերի մասնակցութիւնը աղէտալի հետևանքներ կարող է ծնել հայերի համար։ Փոխանորդ քահանան՝ թեմական ազգային խորհրդի հետ խորհրդակցելուց յետոյ՝ երկու անգամ գնաց հիւպատոսի մօտ և հաւաստիքներ տուեց, որ ոչ մի հայ յարաբերութիւն և մասնակցութիւն չէ ունենալու, և յայտնեց հայ հասարակութեանը Միլլէրի գոհունակութիւնը հայերից. իսկ ներքին կռիւների դէպքերում գործակցող հայերը հէնց առաջին օրերից հեռացել էին Թաւրիզից։

Այս ամենը լաւ. բայց վերջին ամիսներում Թաւրիզում իր կազմակերպութեամբ յայտնի պրօվօկատօրների մի խմբակ ձեռք չէ քաշում իր դարանները լարելուց և պրօվօկացիաներ սարքելուց ընդդէմ հայերի, որպէսզի յանցաւոր ներկայացնէ հայերին, ահրին քաշէ անմեղների վրա։ Ընդհարումների օրերին յիշածս պրօվօկատօրների խմբակի մի անդամը ծակեր բաց անելով իր տան պատերի վրա՝ այնտեղից գնդակներ էր արձակում հիւպատոսարանին և ապա դէպքը հայերին վերագրում. բարեբաղդաբար մէկը ռուս խոհեմներից սեփական աչքով տեսնելով պրօվօկատօրի վարմունքը՝ գնացել ու յայտնել էր հիւպատոսին, որով փարատվեց ռուսաց միսիայի այն կարծիքը, թէ հայերը գնդակ են արձակում հիւպատոսարանին և այլն։ Այսպէս խաղաղ ու անվրդով անցկացնելուց յետոյ մինչև յունվարի 4-ը՝ նոյն օրը անակնկալ լսվեց, որ բէյլէր-բէյի տանը ռուս զինուորները ձերբակալել են բռնել Մուժամբար գիւղացի և անուղղակի հարկերի վարչութեան տեսուչ Պետրոս-խան Անդրէասեանին ու տարել են ռուսաց հիւպատոսարանը և այնտեղից բանակը՝ Բաղը Շումալ։ Անդրէասեանի ձերբակալութիւնը այն բանի համար էր անշուշտ, որ կասկածներ ու հակառակորդ թուրքերից վկայութիւններ էին յայտնվել վերջին դէպքերին մասնակցելու ամբաստանութեամբ։ Թաւրիզի հայ հասարակութիւնը՝ նկատելով հայերի անմեղ վերաբերմունքը, ժողով է գումարում, մի մասնաժողով ընտրում, որ այդ մասնաժողովը յայտնէ, պարզաբանէ հայերի անմեղութիւնը և Անդրէասեանի ապատութիւնը հայցէ առ որ անկ է, նկատողութեան առնելով հայերի դրութիւնը հանդէպ պարսիկների Պարսկաստանում։ Յանձնաժողովը խնդիր է ներկայացնում հիւպատոսին, Անդրէասեանի կնոջը հեռագրել է տալիս Կայսրուհուն, Կովկասի Փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկովին, կաթողիկոսական փոխանորդին, Թիֆլիսի Եփրեմ սրբազանին՝ մի ճար, մի գթութիւն աղերսելու կալանաւորի կեանքին սպառնացող վտանգի դէմ։ Ի միջի այլոց դիմումն է եղել նաև Թաւրիզի անգլիական հիւպատոսին, որի միջնորդութեան շնորհիւ միայն դաշտային ատեանը երկու օրով յետաձգեց ատեանի վճիռը՝ բանտարկեալին միջոց տալու համար, որ կարելի միջոցներն ի գործ դրվեն. սակայն ի զուր։ Ստացվեց Եփրեմ եպիսկոպոսի անհասկանալի հեռագիրը. կաթողիկոսական տեղապահ Սուրէնեան սրբազանն այդ գործը իրանից հեռու էր համարում. իսկ Կովկասի Փոխարքան պատասխանել էր, որ պատերազմական ատեանի վճիռն իրան վերաբերութիւն չունի։ Գործն այս դրութեան մէջն էր, որ ամսիս 5-ին, հինգշաբթի գիշեր, հասաւ Թաւրիզ թեմակալ Կարապետ սրբազանը և գործի ղեկավարութիւնն ինքը յանձն առաւ։ Կարապետ եպիսկոպոս ոչ մի ջանք և միջոց չը խնայեց գործի աջողութեանը նպաստելու մտքով. դիմումներ հիւպատոսին, գեներալ-մայոր Վօրօպանովին, շտաբի կառավարչին և այլոց։ Սրբազանի վերջին յոյսը մնաց արտաքին գործերի մինիստրի միջոցով ռուսաց Կայսրին հեռագրել և գթութիւն խնդրել հիւպատոսի հետ խորհրդակցութեամբ։ Դաշտային դատարանի վճիռը կայացել էր արդէն՝ «Անդրէասեանն ի մահ, ի կախաղան»։ 24 ժամից յետոյ դիակը յանձնվեց տէրերին։ Անդրէասեանի թաղումը տեղի ունեցաւ Լիլաւայի եկեղեցու գաւթում երկսեռ խուռն բազմութեան ներկայութեամբ, որը իր արտասուքի լճի մէջ ծածկեց խեղճամահը և դրեց սառը հողի ծոցում։

Անդրէասեանի տունը կնքված է. պէտք է ցրիւ տան ու կործանեն թէ ոչ, յայտնի չէ դեռ։ Սրբազանը վերստին դիմեց հիւպատոսին և խնդրեց, որ գէթ խնայեն այդ՝ նրա որբացեալ ընտանիքի համար։

Թէ այս վերջին դէպքերին Թաւրիզի հայերը անմասն են եղել, այդ ամեն կասկածից վեր է. ստոյգ է և այն հանգամանքը, որ գոյութիւն ունի որոշ խմբակի կողմից պրօվօկացիա. մնում է հայերին զգոյշ մնալ, խոհեմ շարժվել, և որ գլխաւորն է՝ ազգային խորհրդի և գիտակից անձնաւորութիւնների սրբազան պարտականութիւնն է հասկացնել միսիային գոյութիւն ունեցող պրօվօկացիայի մասին, որից դեռ շատ վտանգ է սպառնում հայերի համար։

Հայկազուն

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

—

Մերսին, 28 դեկտեմբեր

Քանի մը շաբաթէ ի վեր Ադանա կը գտնուի Կիլիկիոյ վեհ. կաթողիկոսը։

Անցեալները հայերը նորէն հոն երկիւղ մը անցուցին, բարեբաղդաբար առանց լուրջ հետևանքի։

Արդարև որոշ բան մը չկայ, բայց և այնպէս իսլամ ժողովրդոց տրամադրութիւնը միշտ յուզուած և լարուած կը մնայ։ Եւ եթէ կառավարութիւնը թոյլ մնայ և կամ աչքակապութիւն մը ընէ, նորէն երկիրը կրնայ խառնուիլ։ Ասոր ալ տարակոյս չկայ։

Ուստի նորէն ամեն ինչ կապուած կը մնայ, միշտ, կառավարութեան։

Կըսուի թէ բոլոր մահմեդականներուն զէնքեր բաշխուած են։ Ինչո՞ւ, ինչ նպատակաւ. յայտնի չէ։ Եթէ ատիկա եղած է իտալական ուէ յարձակումի դէմ կանխահոգութեամբ մը, ոչինչ միջոց մըն է. իսկ եթէ եղած է, վերջին վայրկեանին, հակաքրիստոնէական շարժումով մը եւրօպական պետութիւնքը վախցնել և կասեցնելու համար, սխալ և աղէտալի հաշիւ մըն է։

Բայց ո՞վ կը խորհի այդքան երկար բարակ։

Երկիրը ծանր տագնապ մը կանցնէ, ներքուստ ու արտաքուստ ահաւոր նախօրեակներու դէմ յանդիման կը գտնուինք, ինչ որ ամենէն անզգայ մարդկանց անգամ խելքի պէտք է բերէր։ Մեր կառավարիչները և օրէնսդիրները, անձնական և կուսակցական շահախնդրութեամբ, նոր ընտրութեանց մէջ իրենց աթոռը պահպանելու ճիգէն լոկ խելացնոր և կուրացած՝ ազգաւ կռիւ մը սկսած են իրարու դէմ, ինչ կասկած, միշտ սրբազան սկզբունքներու անունով, և այնքան մոլեգնօրէն, որ անոնք՝ իրենց աթոռին և դիրքին սիրոյն՝ պիտի չվարանին իսկ օսմանեան հայրենիքը մատնելու և քանդելու։

Եւ այս պայմանաց ներքև ինչպէս կուզէք որ երկիրը անդորր մնայ և ժողովուրդը՝ խաղաղ։

Կուսակալ Մուաամմէզ-բէյ, որ պտոյտի ելած էր ու կը գտնուէր իր կուսակալութեան արևելեան գաւառները, իմանալով Ադանայի խլրտումները, անմիջապէս իր տեղը դառնալով կարգ ու կանոնի պահպանութեան անձամբ հոգածու գտնուած է։

Ի մի խմբելով բոլոր ազգաց ներկայացուցիչները՝ յորդորներ տուած է համերաշխութեան և միաբանութեան ամեն կողմը հեռագիրներ տալով՝ իր ենթակայ պաշտօնէութեանց հրամանագրած է, որ անդորրութիւնը խանգարողներուն դէմ զինուորական ամենախիստ միջոցներու դիմեն։

Ահա, միջոց մը այս վերջինը, որ եթէ անկեղծօրէն գործադրուի, պիտի կրնայ արդիւնաւոր ըլլալ։ Միւս համերաշխութեան ժողովներն և քարոզները բոլորն ալ գայլի աւետարան են, մեր հայրենակից իսլամներուն գլուխը չմտնող։

Դուրսը փոթորիկ, օդը փոթորիկ, ներսը փոթորիկ. Փոթորիկներու շրջան մը։ Նայինք թէ ի՛նչ պիտի ծնէ։

Դիտող

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒԼԱԽ-ՇՈՒՇԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

—

Հեռագիրն անցեալներում աւետեց, որ վերջապէս Մ. Սարուխանեանցը կարողացաւ ստանալ Եւլախ-Շուշի երկաթուղու կառուցման թոյլտւութիւնը։

«Մշակը», որ նախանձախնդիր էր այդ գործին, հրատարակեց մի շարք յօդուածներ՝ օր առաջ կառուցված տեսնելու Ղարաբաղի և Զանգեզուրի ժողովրդի համար անհրաժեշտ այդ ճանապարհը։

Երբ քաղաքումս լսվեց, որ Մ. Սարուխանեանը մեծ եռանդով անցել է այդ գործի գլուխը և ցանկանում է, ամեն ճիգ թափելով, գլուխ բերել այդ ճանապարհի կառուցման խնդիրը, մեծ ոգևորութիւն սկսվեց ժողովրդի մէջ։ Գրեթէ ամբողջ քաղաքը, առանց կրօնի և ազգութեան խտրութեան, ժողովվել էր քաղաքային վարչութիւնը, խորհելու այդ հարցի մասին և մի անգամից աջակից և թև ու թիկունք լինելու Սարուխանեանին, որ ասպարէզ գալով՝ ուզում է իր հայրենակիցներին երկաթուղի շնորհել, որի հետ և լոյս, քաղաքակրթութիւն, կատարելագործված և քնքշացած մարդկութիւն, առևտուր և վերջապէս կենդանի կեանք։ Այդտեղ սկսվել էր ճառախօսութիւնը, խօսքերը մեծ շչակով դուրս էին գալիս խօսողների բերաններից։ Ամենքի ցանկութիւնն էր օգնել Սարուխանեանին և օր առաջ տեսնել Եւլախ-Շուշի երկաթուղին կառուցված։ Ժողովը ցրվելուց յետոյ, ամենքն էլ սկսեցին ստորագրութիւններ բանալ, թէ ով որքան բաժնետոմս կարող է գնել, և այդպիսով աջակից լինել երկաթուղու կառուցման խնդրին։ Ստորագրութիւնները, թարմ ազդեցութեան տակ, հսկայական քայլերով էին առաջ գնում, և մի քանի օրում, ինչպէս լսեցի, աջակցութեան գումարը հասել էր հարիւր հազարի։ Միթէ դրանով սխալվում էր շուշեցին, միթէ նա մի քանի տասնեակ բաժնետոմս գնելով կորուստ ունէր. ո՛չ։

Մ. Սարուխանեանի կրած չարչարանքները, նեղութիւնները, արած ծախսերը, այդ ճանապարհի համար կատարել տուած ուսումնասիրութիւնների կրած զրկանքները անչափ, անհաշիւ են։ Նա բոլորովին երկիւղ չէ կրել, որ այդ ամենը կարող են անհետ կորչել, եթէ ճանապարհի շինութեան թոյլտւութիւնը չը տան։ Եւ նրա կապալառուն դեռ երկու տարի սրանից առաջ և այսօր իսկ շարունակ մատակարարում է ճանապարհի շինութեան փայտեղէն մասը։ Սրանով ուզում եմ ասել, որ Մ. Սարուխանեանը ոչ մի վտանգի, արգելքի և խոչընդոտի առաջ խոյս չէ տուել, ամեն քաջութեամբ, առանց յուսահատվելու տարել է գործը, և այսօր գործը պսակվել է փառքով։

Մ. Սարուխանեանը կատարել է իր ցանկութիւնը, հասել է իր նպատակին։

Իսկ այժմ ինչ է մնում նրա հայրենակիցներին։ Պարտականն այժմ ղարաբաղցիներն են, որ պէտք է գործով ցոյց տան և ազատվեն պատասխանատուութիւնից, ապագայի ծանր մտատանջութիւնից։

Սկսելով Շուշի-Եւլախ երկաթուղու կառուցումը՝ Մ. Սարուխանեան առաջարկել էր ժողովրդին մի շատ պարզ պայման։ Որպէս զի Եւրօպայի կապիտալը նորից իր ահռելի ճանկերի մէջ չառնի այդ ճանապարհի շահագործումը, նա առաջարկել էր ժողովրդին, որ այդ ճանապարհը ուզում է շինել ժողովրդի աջակցութեամբ, որպէս զի նրա օգուտն էլ մնայ ժողովրդի մէջ։ Դրա համար և գործադրել էր Եւրօպայում մուտք գործած մի սովորութիւն—բաժնետոմս՝ իւրաքանչիւրը 250 րուբլի արժողութեամբ, և յարմարութիւն ստեղծել, որ նրանք այդ գումարը վճարեն մաս-մաս։

Սկզբում, որովհետև ճանապարհի շինութեան թոյլտւութիւն չը կար, գործը մի քիչ կաղում էր, իսկ այժմ այլ ևս չը կայ և չը պէտք է լինի ոչ մի պատճառաբանութիւն։

Ով ղարաբաղցիներ, ուր որ կաք—օտարութեան մէջ, թէ հայրենիքում—գնէք մի, երկու և աւելի բաժնետոմս, և ձեզ համար կը բացվի աշխատանքի մի անսպառ աղբիւր. աշխատէք այդ բաժնետոմսերը տարածել ձեր շրջանում, քաղաքներում, աւաններում և գիւղերում, և մի թոյլ տաք, որ Եւրօպայի կապիտալը գայ և կուլ տայ ամեն բան։ Ապագան ձեզ համար մտատանջալից կը լինի։ Մ. Սարուխանեանը իր գործը կատարեց. դուք էլ ձեր պարտքը կատարեցէք։ *

Շուշի

—

Այս օրերս մեզ ուղարկեցին Եւլախ-Շուշի նեղուղի երկաթուղագծի ծրագրային քարտէզը, որ հաւանութիւն է գտել կառավարութեան կողմից։

Գիծը սկիզբն առնելով Եւլախ կայարանից՝ շարունակվելու է ներկայ խճուղուց դէպի աջ՝ ունենալով 8 կայարան և 3 կիսակայարան։

Գիծն անցնելու է հետևեալ տեղերով՝ բացի Եւլախից. Ազադ-Բէգլի, Կայալի (կիսակայարան «Սարով»), Կահրաման-Բէգլի, Գիւլաբանդ, Սարիջալու, Թարթառ (կայարան), Սախլաբատ, Եալիմջի, Ախդարա (կիսակայարան), Իբադումլու, Ղարաֆիբում (կայարան «Խաչէն»), Մախսուտլի, Շահբուլաղ, Տարնաուտ (կիսակայարան «Տիգրանակերտ»), Քիասլու, Խըզըրլու (կայարան «Աղդամ»), Խրամորթ, Խանաբաղ, Ասկարան (կայարան), Խօջալլի, Բալուջա (կայարան), Խանքենդ (կայարան), Ղայբալլի, Խալֆալլի (կայարան «Շուշի»)։

Խմբ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Մեզ հաղորդում են, որ այսօր, ուրբաթ, Գրական-Գեղարւեստական Սալօնի հերթական jour fixe-ը նուիրված կը լինի հրապարակախօս Պետրոս Սիմէօնեանին՝ մահվան տարեդարձի, և բանաստեղծ Նալպօնին՝ մահվան 25-ամեակի առիթով։ Հրաւիրվում են սալօնի մշտական հիւրերը (գրագէտներ, գեղագէտներ, լրագրողներ իրանց ընտանիքներով և «Աղբիւր-Տարազի» բաժանորդները)։ Ոչ ոքի առանձին հրաւէր չէ ուղարկվում։ Նոյն օրը, երեկոյեան ժամը 7-$^{1}/_{2}$-ին, Մամուլի Բիւրօյում («Աղբիւր-Տարազին» կից) կը կայանայ հաշւետուութիւն հայ մամուլին «Մեղու Հայաստանի» լրագրի արտակարգ №-ի հրատարակութեան մասին, որ Թիֆլիսի հայ մամուլը հրատարակեց Պետրոս Սիմէօնեանի յիշատակին, նրա դագաղին պսակ դնելու փոխարէն։ Հաշւետուութիւնից յետոյ կը կայանայ զեկուցում մամուլին վերաբերեալ մի միջադէպքի մասին։ Եւ որոշում, թէ այս գործին ինչպիսի ընթացք տալ։ Գրական-երաժշտական հանդէս սկիզբն է երեկոյեան $8^{3}/_{4}$ ժամին։

◆ «Մշակի» № 10-ի մէջ տպված «Մշակի» 40-ամեայ յօբելեանը» յօդուածում, կենտրոնական Յօբելեանական Յանձնաժողովի անդամների ցուցակի մէջ սխալմամբ մոռացված է մի անդամի, այն է՝ Սերովբէ Կիւլպենկեանի անունը, որ նոյնպէս ընտրված է անդամ Յանձնաժողովի։

◆ Ի կատարումն հանգուցեալ Ալ. Մանթաշեանի կամքի, կտակակատարները Թիֆլիսի հայ ծխական դպրոցների հոգաբարձութիւններին վճարում են 1000-ական ր.։ Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում կայ ընդամենը 24 հայ ծխական դպրոց։

◆ Մենք ստացանք Գիւտ ա. ք. Աղանեանից նրա հրատարակած «Դիւան հայոց պատմութեան» պատմական ժողովածուի 9-րդ գիրքը, որ վերաբերում է Յովսէփ կաթողիկոս Արղութեանին և պարունակում է նրան վերաբերեալ պատմական դօկումենտների առաջին հատորը, սկսեալ 1778 թւից մինչև 1800 թ.։ Այս հատորը նուիրված է իշխան Բօրիս Ն. Արղութեան-Երկայնաբազուկին։ Նա պարունակում է նաև Յովսէփ կաթողիկոսի մի շատ աջողված պատկերը և նրա ինքնագիր գրութիւնները։ Գիւտ ք. Աղանեանի ձեռնարկած այս հրատարակութիւնը, անշուշտ, մի կարևոր գործ է մեր ազգային պատմութեան վաւերագրերի քննութեան համար։ Գինն է 4 ր., որ, նայելով գրքի մեծութեան և նշանակութեան, թանգ չէ։ Տպված է խնամքով և գեղեցիկ։

◆ Յօգուտ ուսանողների՝ Արքունական թատրոնում «Տառեանայի օրը» տրված երեկոյթից զուտ հասոյթ մնացել է 2800 րուբլի։

◆ Ինչպէս յայտնի է, Պետերբուրգում տեղի կունենայ մի համագումար՝ քաղաքների առողջական դրութիւնը բարւոքելու հարցի քննութեան համար։ Բարձրագոյնս հրամայված է այդ համագումարի անդամների երկաթուղային տոմսերի վճարը պակասեցնել։

◆ Միքայէլեան արհեստաւորաց դպրոցի վերատեսուչ Ակուլեանի նախաձեռնութեամբ, յիշեալ դպրոցին կից, հաստատված են երեկոյեան դասընթացքներ, որոնցից օգտվում են մօտ 40 մարդ։ Դասընթացքներում աւանդվում են ռուսերէն և թւաբանութիւն տարրական դպրոցի ծրագրով։

◆ Երկուշաբթի, յունվարի 23-ին, Արտիստական թատրոնում, դերասան Աբէլեանի բենեֆիսին կը ներկայացվի Սարդուի յայտնի «Հայրենիք» դրաման։

◆ Թիֆլիս է եկել ծառայութեան գործերով երկրագործութեան դեպարտամենտի փոխ-վերատեսուչ Սօկօվնինը։

◆ Այսօր, կայսեր. Կովկասեան Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ Ջխէձէն կը կարդայ ռեֆերատ ազգայ հասարակական կազմի մասին։

◆ Թիֆլիսում գտնվող «Կախէթիա» այգետէրերի ընկերակցութիւնը դիմել է Թիֆլիսի նահանգի ազնուականներին՝ խնդրելով տալ իրան փոխարինաբար 100,000 րուբլի (առաջուց ազնուականութիւնը տուել է 50,000 ր.)։

◆ Վաղը Թիֆլիսի Հասարակական Կլուբում, Ֆոմինի ռեֆերատից յետոյ, տեղի կունենայ կլուբի անդամների ընդհանուր ժողովը՝ անցեալ տարվայ հաշիւները քննելու համար։

◆ Բագւում հայ և ռուս ձայնաւորների միջև ծագած թիւրիմացութիւնը հարթվել է։ Հայերը երկու տեղ զիջել են ռուսներին։

ՏԵՂԵԿ. ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

◆ Կիրակի, յունվարի 15-ին, Վրաց թատրոնում ի պատիւ յօբելեարուհի Մ. Սափարօվա-Աբաշիձէի տեղի ունեցաւ ցերեկոյթ, նախաձեռնութեամբ յօբելեանական մասնաժողովի։ Վարագոյրը բացվելիս վրացի աշակերտների խումբը երգեց «Սամշօբլօ» երգը, երաժշտագէտ Փալիաշվիլիի խմբապետութեամբ և երաժշտախմբի նուագակցութեամբ, որ հասարակութեան խնդրանօք կրկնվեց։ Դրանից յետոյ բանաստեղծ Ակակի Ծերեթէլին մի համառօտ բանախօսութեամբ պարզեց վրաց թատրոնի նշանակութիւնը, ծանօթացրեց նրա ծագման և զարգացման պատմութեան հետ, այլև Մ. Սափարօվա-Աբաշիձէի նշանակութիւնը, որպէս վրաց կարևորագոյն ույժերից մէկը։ Ապա Փր. Դիասամիձէն կարդաց մի դասախօսութիւն յօբելեարուհու մասին, որը հետաքրքրական և աջող բնորոշող կէտեր էր պարունակում իր մէջ։ Վերջում կենդանի կերպով խաղացվեց մի վօդէվիլ։ Միջարարներից մէկի ժամանակ գումարվածների բուռն ցանկութեան համաձայն բեմ ելաւ յօբելեարուհի Մ. Մ. և դառնալով մեծաքանակ աշակերտութեանը և մատաղ սերնդին, որոնցով լի էր թատրոնի դահլիճը, մի քանի ջերմ խօսքերով խորհուրդ տուեց նրանց սիրել վրաց թատրոնը, իբրև ազգային խոշոր հաստատութիւն և պահպանել այն իբրև սրբութիւն։

◆ Լոյս տեսաւ «Կօօպերացիա» շաբաթաթերթի 19-րդ համարը, որի մէջ զետեղված են մի շարք հետաքրքրական յօդուածներ։ Այդ համարի հետ բաժանորդներին ուղարկված է կօօպերացիայի վերաբերեալ բրօշիւրների առաջին գիրքը, որ կրում է «Սպառող ընկերութիւնների նորմալ կանոնադրութիւն» վերնագիրը։ Բրօշիւրն արժէ 10 կօպէկ։

◆ Վրաց ազնուականութեան ներկայացուցչական խորհուրդը իր վերջին նիստում որոշել է շնորհաւորել Մ. Մ. Սափարօվա-Աբաշիձէի յօբելեանը և նուիրել նրան 500 րուբլի։

◆ Վրաց Դրամ. Ընկ. վարչութիւնը «Սախալխօ Գազէթի» թերթին ուղղած իր մի գրութեամբ ցաւ է յայտնում յունվարի 6-ին վրաց թատրոնում կատարված ցաւալի միջադէպի առիթով, երբ դերասան Կ. Մեսխի վիրաւորեց նոյն թերթի աշխատակից Դ. Կասրաձէին և խմբագրութեան անդամ Արչիլ Ջաջանաշվիլիին։ Վարչութիւնը Մեսխիի այսօրինակ վարմունքը անհանդուրժելի և դերասանի կոչումի համար անթոյլատրելի գտնելով, յայտնում է իր ցաւակցութիւնը։

◆ Հինգշաբթի, յունվարի 19-ին յայտնի դերասան Լադօ Մեսխիշվիլիի մասնակցութեամբ վրաց թատրոնում կը խաղացվէ «Համլէտ» ողբերգութիւնը։

◆ Օզուրգէթի գաւառի Լիխաուրի գիւղի հասարակութիւնը խնդրում է Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան գլխաւոր վարչութիւնից նոյն գիւղում բանալ յիշեալ Ընկերութեան ճիւղ։

◆ Վրաց մէջ Գրագիտ. Տարածող ընկերութեան գլխաւոր վարչութեանը եղբ. Զուբալօվների կողմից աւանդ տրված այն գումարը, որից ուսանողներին թոշակ պիտի տրվէր մինչև ներկայ տարվայ յունվարի 1-ը, ներկայիս ընդհատված է, որի շնորհիւ այդ գումարով սովորող ուսանողները ընկել են անորոշ կացութեան մէջ։ Այդ պատճառով ուսանողները դիմելով յիշեալ Ընկերութեան գլխաւոր վարչութեանը՝ խնդրում են օր առաջ վերջնականապէս պարզել այս հարցը։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Մաթեմատիկոսների ժողովը՝ Պետերբուրգում.—Դեկտեմբերի 27-ին հաւաքվել էին մօտ 900 պատգամաւոր։ Ժողովը բաց արեց կազմակերպչական բիւրօյի նախագահ՝ պատերազմա-մանկավարժական թանգարանի կառավարիչ գեն.-լէյտենանտ Զ. Ա. Մակշէևը։ Հաստատված են 65 զեկուցում, որոնք վերաբերում են մաթեմատիկայի դասաւանդութեան անյետաձգելի րեֆօրմներին։ Ժողովը նախագահ ընտրեց Պետական Խորհրդի անդամ՝ պրօֆ. Ա. Վ. Վասիլիէվին, նրա օգնական՝ գեներալ Մակշէևին, քարտուղար՝ Ալէքսանդրովին։ Առաջին ժողովում կարդացվեցին հետևեալ զեկուցումները. Վասիլիէվը՝ «Մաթեմատիկական ու փիլիսոփայական կրթութիւնը՝ միջնակարգ դպրոցում», Բօգօմօլօվը՝ «Երկրաչափութեան հիմունքը նրա դասաւանդութեան հետ»։ Պրօֆ. Վասիլիէվը, իր զեկուցման մէջ, գալիս է այն եզրակացութեան, որ միջնակարգ դպրոցը պէտք է համարէ իր գլխաւոր նպատակներից մէկը՝ առաջ բերել շահագրգռում փիլիսոփայօրէն մտածելու համար։ Սրա համար զօրեղ միջոց է հանդիսանում մաթեմատիկան, որ նպատակ է դնում իրան ոչ միայն լօգիկապէս մտածելու զարգացումը, այլ և աշխատում է ապացուցել այն կապը, որ կայ մաթեմատիկայի ու փիլիսոփայութեան միջև։

◆ Ուսանողական տան օգտին.—Յունվարի 27-ին, Благородное Собраніе-ի դահլիճներում, հիմնվելու է երեկոյթ՝ ուսանողական տուն հիմնելու ֆոնդի օգտին։ Գլխաւոր համարը լինելու է «կաղամբավաճառը», Փոքր դահլիճում, Գեղարուեստական թատրոնի բոլոր արտիստների մասնակցութեամբ։ Երեկոն կազմակերպելը յանձն է առել նոյն թատրոնի հայ արտիստ՝ Ն. Ա. Բալիևանը։

◆ Վարակիչ հիւանդութիւնների մասին.—Մօսկվայի ռուս բժիշկները ժողով կազմեցին յունվարի 2-ից մինչև 7-ը և խորհրդակցեցին բակտերիօլօգների, միկրօբիօլօգների և էպիդէմիօլօգների ներկայացուցիչների հետ՝ ուսումնասիրելու համար Ռուսաստանի վարակիչ հիւանդութիւնները և նրանց դէմ կռւելու միջոցների մասին։ Է. Ք. Ն.

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԷՎՕԼԻՒՑԻԱՆ ԵՒ ՆՐԱ ԹԱՐՄՈՒԹԵԱՆ ՆՇՈՅԼՆԵՐԸ ՄԵԶԱՆՈՒՄ

III

Թարմութեան որոշ նշոյլներ, որոշ սիմպտոմներ մենք մասամբ նկատում ենք Պետերբուրգի կօնսերվատօրիայում ուսանող Ռ. Մելիքեանի երաժշտական նորագոյն արտադրութիւնների մէջ, որոնք հրատարակված են անցեալ ամիս և կրում են «Երկու երգ» վերնագիրը (Opus 1)։

Ռ. Մելիքեանի երաժշտութեան առաւելութիւնը մեր երաժշտական ներկայ իրականութեան մէջ մենք գտնում ենք նրանում, որ նրա երգի եղանակները ըստ ամենայնի համապատասխանում են բնագրի բովանդակութեանը և պարուրված են անկեղծ զգացմունքների ներշնչումներով։ Նրա «Վարդի» մեղեդիան (խօսք Գէօթէի)—պատանեկական դեռահաս կեանքի կարճ, բայց բիւրեղ մի մոմենտի արտայայտութիւնը, հնչիւնների մի սիրուն հոսանք է, որ ուղեկցում է սինկօպներով գրված կլասիկ ներդաշնակութեամբ։

Ժամանակակից կեանքը երգող տեքստին համապատասխան եղանակ յօրինելու ու ներդաշնակելու համար գլխաւոր նախապայման պէտք է համարել նրա—եթէ նա, տեքստը, պատկերաւոր է և անկեղծ ներշնչման արգասիք—խորունկ ու բազմակողմանի ըմբռնումը։ Եթէ որոշ ձիրքով օժտված երաժշտագէտը իր երգի յօրինումից առաջ ըմբռնել է համապատասխան բնագրի էութիւնը, ներշնչվել նրա զգացմունքներով ու տոգորվել նրա մէջ ամփոփված մտքերով, ապա նրա կոմպօզիցիան պէտք է համարել անպայման արգասիք անկեղծ ոգևորութեան։

Երաժշտագէտի համար անհրաժեշտ այդ բարդ յատկութիւնը մենք որոշ չափով նշմարում ենք Ռ. Մելիքեանի մէջ, որը ակնյայտ զարգանալու տենդենցներ ունի։ Նրա «Աշունը» նոյնիսկ աւելի լաւ է գրված իբրև երաժշտական պարզ յօրինուածք, քան ինքը բնագիրն է ներկայացնում։ Օրինակ, երբ նա մտցնում է «պաղ-պաղ մէգի հետ փչող քամու» շեշտը, ներդաշնակ հնչիւնների այդ հակիրճ պարբերութեան մէջ մենք ամփոփված ենք տեսնում «պաղ-պաղ մէգի» և «փչող քամու» րօպէական իլլիւզիան, մինչդեռ բնագիրը միանգամայն հեռու է այդ իլլիւզացիայի հարազատ գաղափարից։ Երկար կանգ չենք առնի, սակայն, այս «երկու երգի», այլ և նոյն Ռ. Մելիքեանի մի քանի այլ երգերի վրա։ Նրա ներկայ երգերը պատանեկական պարզ ու զուարթ բնաւորութիւն ունենն. նա պէտք է հանդէս գայ աւելի բարդ ու բազմակողմանի հոգու արտայայտութեան փորձերով։ Եւ մենք սպասում ենք։ Մեր ցանկութիւնն էր առանձնապէս ընդգծել նրա երգերի մէջ այն գիծը, որ դրդում է առայժմ տեսնել նրա մէջ ապագայի մի յուսալի հեռանկար։

Սակայն ինչո՞վ պէտք է հարստանայ այդ հեռանկարը, ինչո՞վ պէտք է լցվի նրա ներքին ծաւալը. ահա այն գլխաւոր խնդիրը, որ պէտք է առաջնակարգ նշանակութիւն ունենայ ամեն մի երիտասարդ երաժշտի համար։ Մեզանում երաժշտութեան ասպարէզում հանդէս եկողներ շատ են եղել, սակայն նրանցից և ոչ մէկը ստեղծագործութեան որոշ հեռանկար չէ ունեցել, ոչ մէկը մնայուն հետք չէ թողել, բացառութեամբ մի-երկուսի։

Ժամանակակից կեանքը, շեշտում ենք, բարդ է իր կազմակերպութեամբ. սօցիալական հակասութիւնների ժխորը առաջին նուագ մի ամբողջ տարտարոս է։ Կեանքի բազմաթիւ ելևէջների արտայայտութեան համար անհրաժեշտ է շատ բան։ Ինչպէս գեղարուեստի միւս ճիւղերում, այնպէս էլ երաժշտութեան մէջ՝ երաժշտագէտը չը պէտք է միմիայն զգացմունքներով ապրի. դա միակողմանիութեան և հոգու աղքատութեան նշան է։ Իսկական երաժիշտ լինելու համար հարկաւոր է զգացմունքի զօդումը միացնել որոշ մտապատկերների հետ։ Կոմպօզիտոր երաժիշտը պէտք է ամփոփի իր մէջ այն բոլոր վերապրումները, որ յատուկ է նրա միջավայրին ու հասարակութեանը։ Նրա հեղինակութիւնները բազմակողմանի կը լինեն այն չափով, որ չափով նա բազմակողմանի կերպով կըմբռնի իրական կեանքի բազմերանգ գոյները։

Յոյզերի յախուռն տարափի, տրամադրութիւնների մռայլ ու զուարթ անդրադարձման, հոգեկան բուռն ու բարդ շեշտերի անսպառ աղբիւրը՝ դա միջավայրի հասարակական կեանքն է իր բոլոր կողմերով։ Շնորհալի երաժշտագէտին ուղղակի անհրաժեշտ է ուսումնասիրել այդ կեանքը իր գունեղ երևոյթներով։ Ուսումնասիրել կեանքի երևոյթները օբյեկտիվ կերպով անցկացնելով այդ ամենը իր սուբյեկտիվ վերապրումների բովով, ահա որն է իսկական երաժշտագէտի արժէքն ու գնահատութեան խոշոր աղբիւրը։

Մեր հրապարակում եղած երաժշտական հեղինակութիւնների շարքում գեղարուեստական արժէք ունենն սոսկ այն երգերը, որոնք հարազատ են ու պատկերաւոր իրանց գիւղական եդեմական բնաշխարհի պարզամիտ ու անկեղծ մռմռունջներով ու շեշտերով։ Բայց նրանք անցողական շրջանն են թեակոխել և մօտ ապագայում նրանք կը կորցնեն իրանց տիրապետող ու գերակշռող նշանակութիւնը։

Սակայն միւս կողմից, փոխանցման այս շրջանում, այն փորձերը, որոնք երբևիցէ արվել են կօնտրաստներով հարուստ քաղաքի մոտիվները հարազատ գոյներով ներկայացնելու՝ (շատ քիչ բացառութեամբ) անգոյն արտադրութիւններ են հրապարակ հանել։

Այդ բացառութիւնների շարքումն է, որ մի նոր բացառութիւն ենք համարում Ռ. Մելիքեանի հանդէս գալը իր «երգերի» թարմ ներշնչումներով։ Բացառութիւն ենք համարում, որովհետև նրա մէջ տեսնում ենք որոշ ձգտումն՝ խուսափելու միապաղաղ ու մօնոտօն հնչիւնների շաբլօն կօմբինացիաներից։ Տեսնում ենք, որ նա աշխատում է տալ գոյներ, կօնտրաստներ, հոգեկան յոյզերի հարազատ արտայայտութիւններ։

Հարազատութեան գլխաւոր գրաւականը, դա՝ անկեղծութիւնն է, որ անմիջական կերպով բղխում է անհատի ներքին արժանիքներից։

Քաղաքի երգերն ու ռօմանսները մեզանում երգվել են արհեստական ձևերով ու նմանողական ճիգերով. անկեղծութիւնը այդտեղ բացակայել է կատարելապէս։

Ասում ենք՝ գիւղական լէյլէններն ու հօրովէլները շուտ կը կորցնեն իրանց հմայքը. բաւական է առաջին անգամ գիւղերի միջով հև ի հև անցնի երկաթուղային գնացքը, բերելով իր հետ երկրի արդիւնաբերութեան ձևակերպած պատգամները...

Ահա քաղաքը ազդում է. նա արդէն սկսում է գերակշռել գիւղի հանդէպ. պրօգրեսսի սաղմը այնտեղ է թաղված։ Այնտեղ է, որ մոտիվները երաժշտից խստօրէն պիտի պահանջեն արտայայտել հոգու համապատասխան յոյզերն ու տրամադրութիւնները բարդ, զարտուղի հնչիւններով։

Սուրխաթեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արմէնեան խումբը Երևանում

Մեզ հաղորդում են, որ կազմված է դերասանական մի խումբ՝ Արմէնեան ամուսինների առաջնորդութեամբ՝ բարեկենդանի օրերին մի շարք ինքնուրոյն և թարգմանական նոր պիէսներ ներկայացնելու համար Երևանում, որպիսիներն են. «Արմէնուհի» Շիրվանզադէի, «Բժիշկը» Վալադեանի, «Հէքիաթ» Մանուէլեանի, «Կենդանի դիակ» Լ. Տօլստօյի, «Զարդ» Գօրդինի, «Գվարդէական օֆիցեր» Մօլնարի, «Յիմար» Ֆուլդայի և «Անյայտ կին» Բիսսօնի։

Խումբը ճանապարհ ընկաւ երէկ և առաջին ներկայացումը կը տայ առաջիկայ կիրակի, յունվարի 21-ին, Ջանփօլադեանի թատրոնում։

ՄԱՄՈՒԼ

«Кавказъ» կիսապաշտօնական լրագիրը, ինչպէս գիտենք, այս յունվարի 1-ից հրատարակվում է նոր խմբագրական կազմով։ Նոր խմբագրութեան բռնած ուղղութիւնը—լրագիրը աշխատում է անաչառ և անկողմնապահ դիրք բռնել տեղական հարցերի վերաբերմամբ—դուր չէ եկել «իսկական ռուսների» կամ «ռուս պատրիօտների» օրգան «Голосъ Кавказа» լրագրին, որ սկսել է յարձակողական դիրք բռնել դէպի կիսապաշտօնական օրգանը։

Այդ առիթով, տեղական «Зак. Рѣчь» թերթը իր երէկվայ համարում մի առաջնորդող յօդուածի մէջ ասում է, թէ «Голосъ Кавказа» լրագրի վերաբերմունքը դէպի «Кавказъ» լրագիրը բաւականաչափ բացատրում է այն ատելութիւնը, որով համակված են դէպի մեզ, բնիկներս, այսպէս կոչված «իսկական ռուսները»։

«Нов. Время»-ի և այլ աջակողմեան լրագիրների էջերում,—աւելացնում է թերթը,—այդ ատելութիւնը փոխադրվում է և Կովկասի Փոխարքայի վրա, որ չէ ցանկանում շփոթել մեզ ցեխի հետ և համամիտ չէ «իսկական աջակողմեանների» հետ մեր բնիկ ազգաբնակութեան մասին ունեցած կարծիքին»։

Լրագիրը ամենայն իրաւամբ պահանջում է, որ «իսկական ռուսների» գործակալները, որոնք աշխատում են ամեն կերպ մոլորեցնել ռուս հասարակական կարծիքը մեր երկրի և կացութեան վերաբերմամբ, հանդէս գան իրանց փաստերով և ոչ զրպարտութիւններով։

«Ժամանակ է, վերջապէս, որոշ և պարզ կերպով յայտնել ռուսական անուան այդ ինքնակոչ վշտահարներին, ռուսական պետականութեան այդ թշնամիներին, որ նրանք հանգստանան և չը խանգարեն երկրի կուլտուրական զարգացումը, չը կործանեն ռուսական պետականութիւնը Կովկասում»։

Մենք կարծում ենք, որ մեր յարգելի պաշտօնակիցը զուր է այդքան մեծ նշանակութիւն տալիս «ռուս պատրիօտների» արած ջանքերին՝ անուանարկել Կովկասը և այն Փոխարքային, որի գործ դրած աշխատութիւնը և եռանդը յօգուտ ռուսական պետական շահերի՝ վաղուց արդէն գնահատված են ըստ արժանւոյն ռուս հասարակութեան լաւագոյն և ողջամիտ մասի կողմից և բարձր շրջաններում։

*

Կ. Հ. Բ. Ընկերութեան 30-ամեայ գոյութեան յօբելեանի առիթով եղած յարգանքի ցոյցերը այդ Ընկերութեան հիմնադիր բժիշկ Բ. Նաւասարդեանի հասցէին, ինչպէս երևում է, հանգիստ չեն տալիս մի քանի մարդկանց, որոնց մէջ նախանձը աւելի բարձրաձայն է խօսում, քան ճշմարտութիւնը։ Եւ այդ նախանձին մի կերպ գոհացումն տալու համար մարդիկ դիմում են ծիծաղելի սոփեստութիւնների։ Այդպիսի մի մեծ սոփեստ հանդիսացաւ նորերս մեր ծերունի փաստաբան Սենեքերիմ Արծրունին, որ «Սուրհանդակ» թերթի № 483-ի մէջ տպված մի մեծ յօդուածով ճգնում է ապացուցանել, թէ Կ. Հ. Բ. Ընկ. հիմնադիրները ոչ թէ «բժշկապետ Բ. Նաւասարդեանը, Գաբրիէլ Սունդուկեանցը և ինքը՝ Ս. Արծրունին» են, «այլ նրանք, որոնք դրամական նուէրներ են տուել Ընկերութեան, կամ Ընկերութեան համար դրամ են հաւաքել»։ Եւ այս՝ որոշ անձանց կամ մի որոշ անձի դուր գալու նպատակով միայն գրված խօսքերը ապացուցանելու համար, սոփեստութեան վարպետ Ս. Արծրունին ասում է, թէ որևէ մի շինութեան հիմնադիրը ոչ թէ այդ շինութեան գաղափարը, պլանը յղացող ճարտարապետն է, այլ այն անձը, որ դրամ է տուել շինութեան համար։ Եթէ այդ միտքը ուղիղ լինի, այն ժամանակ մենք պէտք է ասենք, որ Կարմիր-Խաչի հիմնադիրը ոչ թէ Դիւնանն է, այլ այն անձինք, որոնք իրանց դրամական նուէրներով նպաստեցին նրա իրագործման։

Նախ՝ հայկական աշխարհը առաջին անգամ զարմանքով պէտք է իմանայ, որ Ս. Արծրունին էլ համարվում է Կ. Հ. Բ. Ընկ. հիմնադիր։ Այդպիսի բան մենք առաջին անգամն ենք լսում և այն էլ իրա՝ Ս. Արծրունու բերանից։ Հետևաբար՝ անձնական այդ ինքնագովութիւնը միանգամայն անտեղի է, որովհետև ոչ ոք Ս. Արծրունուն չէ համարել և նկատել հիմնադիր Կ. Հ. Բ. Ընկերութեան։ Նոյնիսկ Լէօն, որ կազմել է Ընկերութեան տեղեկագիրը և կազմել է նոյնպէս որոշ անձանց կամ որոշ անձի դուր գալու և նրան փառաբանելու նպատակով, չէ կարողացել այդտեղ աղաւաղել փաստը և վերագրել Ս. Արծրունուն մի պատիւ, որ նրան երբեք չէ պատկանել և որը նրան մինչև այսօր ոչ ոք չէ տուել։ Սենեքերիմ Արծրունու դերը միայն այնքան է եղել, որ բժշկ. Բ. Նաւասարդեանը Ընկերութեան համար իր արդէն կազմած ծրագիրը տուել է Ս. Արծրունուն՝ իբրև իրաւաբան խմբագրելու իրաւաբանական լեզուով։ Այլ բան է մասնակցել արդէն յղացված, կազմված, մշակված կանոնադրութեան խմբագրութեանը, այն էլ այլոց հետ, այլ բան է լինել յղացող, կազմող, մշակող։ Եթէ բժշկ. Բ. Նաւասարդեանից բացի կայ մի այլ անձն, որին կարելի լինէր նոյնպէս վերագրել հիմնադրի պատիւը, դա մեր տաղանդաւոր դրամատուրգ պատկառելի Գ. Սունդուկեանցն է. բայց նա ինքն յայտնում է, որ ինքն եղել է գործակից, աշխատող և ոչ հիմնադիր։ Բոլոր փաստերը ցոյց են տալիս, որ հայկական մի մեծ Բարեգործական Ընկերութիւն հիմնելու գաղափարը բժշկ. Բ. Նաւասարդեանը յղացել և փայփայել է անմիջապէս ռուս-թիւրքական պատերազմից յետոյ, ուրեմն գոնէ 1878 թ. ի վեր. իսկ Ս. Արծրունին, կազմած կանոնադրութեան խմբագրութեանը մասնակցել է միայն 1880 թ.։

Գալով այն անձանց, որոնք իրանց դրամական նուէրներով նպաստել են Ընկերութեան բարգաւաճմանը, ինչպէս Անանեան, Մանթաշեան, Խուդադեան, Բուդաղեան, Ղարաճեան և այլք, ոչ ոք չէ ուրացել և չէ ուրանում դրանց արժանիքը և խաղացած դերը Ընկերութեան գաղափարի իրագործման ու բարգաւաճման գործում։ Բայց սովոր ենք տալ «զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»։ Նախ՝ պատի՛վ գաղափարը յղացողին, ապա՝ պատիւ գաղափարը իրագործողներին։

Ինչ վերաբերում է այն մարդկանց, որոնք վերջին տարիները «աճեցուցին և բազմացուցին», կասենք, որ դժուարը, ամենաէականը՝ գործը յղանալ, աճեցնել, խնամել, զարգացնելն է, որ արել են ուրիշները, իսկ մի անգամ արդէն հաստատ հիմունքների վրա դրված անսասան շինութիւնը պահպանելն ինքն ըստ ինքեան առաջ պէտք է գնար, ինչպէս և գնաց։

Ս. Արծրունու յօդուածը, մեզ թւում է, գրված որոշ և յոռի դիտումներից թելադրված և սին փառասիրութեամբ՝ վերագրել իր անձին մի պատիւ, որ ոչ ոք վերագրել չէ կամեցել և տեղիք էլ չը կայ վերագրելու։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Եկատերինօդար, 16 յունվարի

«Մշակի» անցեալ տարվայ № 287-ում Հ. Առաքելեանը իր «Տպաւորութիւններ» յօդուածներում թիւրիմացութիւն է թոյլ տուել, որ պարտք եմ համարում մատնանշել։ Ես ոչ մի անգամ մասնակցած չեմ «փոքրամասնականների» ժողովներին՝ իրաւունք չը համարելով այդ անել, որպէս «մեծամասնականների» խորհրդակցութիւններին մասնակցող էջմիածնի պատգամաւորական ժողովներում։

Ս. Յարութիւնեանը թէև ըստ իս ոչ ամբողջովին գործադրեց իր բարոյական ազդեցութիւնը թիւրքահայ պատգամաւորութեան վրա, բայց և այնպէս նա առաջարկեց «անպատճառ մտցնել քառանուն ցանկի մէջ Օրմանեան սրբազանին և սևացնել, եթէ մեծամասնութիւնը իսկապէս մի ամբողջութիւն է»։ Հ. Առաքելեանը ուրիշի արտասանած կարծիքը Ս. Յարութիւնեանի մասին՝ ինձ է վերագրել. ես չեմ ուզում տալ այն պատգամաւորի անունը, բայց հաստատում եմ, որ ես յամենայն դէպս դէպի Ս. Յարութիւնեանը յարգանքով էի վերաբերվում, ինչպէս հայ միւս ներկայ եղող գործիչներին, որպէս ոչ մի անձնական հաշիւ չունեցող անձն բոլորի հետ, քանի որ համարեա առաջին անգամն էի հանդիպում մեր հայ գործիչներին՝ հասարակական ասպարէզում։

Տեղիս ռուս լրագրում ես արդէն առիթ ունեցայ յայտնելու իմ կարծիքը ընտրութեան մասին և ընդգծեցի, որ թէ ինքս անձամբ և թէ Ա. Խատիսեանը և Ս. Յարութիւնեանը շատ աշխատեցինք համաձայնութիւն կայացնել երկու ֆրակցիայի մէջ, բայց չաջողվեց, և ըստ իս՝ եթէ իրանց բոլոր բարոյական ազդեցութիւնը գործ դնէին յարգելի Ս. Յարութիւնեանը և Խատիսեանը, շատ հաւանական է, որ համաձայնութիւնը կայանար, և այդպիսով խուսափած կը լինէինք այն մեծ դժբաղդութիւնից, որ պատահեց—երկպառակումից։ Սակայն ես երբէք ասած չեմ, որ Ս. Յարութիւնեանը տգեղ դեր է կատարել այդ դէպքում. Նա բաւականին անտարբեր էր, բայց ոչ դատապարտելի անտարբեր, այլ նկատելի անտարբեր։ Յայտնում եմ, որ ես անձամբ և իբրև ներկայացուցիչ թեմի իրաւունք չեմ համարած պախարակել Ս. Յարութիւնեանի ընթացքը, այլ միայն դժգոհել եմ, որ նա չօգտվեց բարոյական ազդեցութիւնից։ Ն. Սաթունեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

V

Անցեալ անգամ մենք ցոյց տուինք, որ Թիւրքիայի բաղդին տիրացած երիտասարդ-թիւրքերի կուսակցութեան րեժիմը երկրի կառավարութեան գործի մէջ չը կարողացաւ ոչ մի իրական և հիմնական րեֆօրմ մտցնել և շարունակեց Աբդիւլ-Համիդի քաղաքականութիւնը, որով և սաստիկ գանգատներ ու գրգռումներ առաջացրեց իր դէմ։ Ապա մենք ասացինք, որ արտաքին քաղաքականութեան մէջ էլ նոր րեժիմը ծանր պարտութիւններ կրեց։

Սուլթան Աբդիւլ-Համիդի ժամանակ օսմանեան պետութիւնը ենթարկվեց ծանր անդամահատութիւնների։ Նրա տապալումը սակայն վերջ չը դրեց այդ անդամահատութեան։ Նոր րեժիմի ժամանակ Աւստրիան խլեց Թիւրքիայից Բօսնիան և Հերցեգովինան։ Ապա անկախութեան և անջատման դրօշակներ պարզելու հետամուտ եղան Մակեդօնիան, Ալբանիան, Կրետէն, Արաբիան, երբ տեսան և համոզվեցին, որ նոր րեժիմն էլ իր տուած խոստումներից ոչ մէկը չէ իրագործում, երբ տեսան, որ սահմանադրական ֆորմուլաները սահմանված են միայն թղթի վրա մնալ և երիտասարդ-թիւրքերը հանդիսանում են նոյն նեղ, շօվէն, մոլեռանդ հին թիւրքերը, ինչպէս առաջ։ Վերջապէս, Իտալիան ենթարկեց Թիւրքիային նորից մի անդամահատութեան, գրաւելով Տրիպօլիսը։ Եւ եթէ, միջազգային իրաւունքների տեսակէտից, Իտալիայի այդ քայլը համարվում է անարդարութիւն, յափշտակութիւն, բայց չը պէտք է մոռանալ, որ նոր րեժիմը, անուշադրութեան տալով Իտալիայի պահանջները, ստիպեց նրան այդ քայլն անել։

Եւրոպան, եւրոպական երկիրները բնաւ չը փոխեցին իրանց վերաբերմունքը դէպի Թիւրքիան, սահմանադրական նոր րեժիմի հաստատութիւնից յետոյ։ Նրանք համարեցին նրան միշտ «հիւանդ մարդ», որովհետև տեսան և համոզվեցին, որ երիտասարդ-թիւրքերի վարչութիւնը ոչ մի բանով չէ զանազանվում հին թիւրքերի, Աբդիւլ-Համիդի վարչութիւնից։

Եւ «հիւանդ մարդը» միշտ նկատվեց իբրև հեշտ կուլ տալու մի պատառ։

Նա, ինքն, այդ «հիւանդ մարդը» ցոյց տուեց, որ բնաւ մտադիր չէ առողջանալու։ Այն ամենը, ինչ որ կարող էր առողջացնել նրան—վարչական, դատաստանական, ագրարային, արդիւնաբերական րեֆօրմներ—նա զանց արեց և նրանց գործադրութեան համար ոչ մի միջոց ձեռք չառաւ։ Դարձեալ նոյն հարստահարութիւնները, կեղեքումները, խաբեբայական խոստումները։

Եւ վանելով իրանց միջից լաւ տարրերը, դեմօկրատիական և ողջամիտ մարդկանց տարրերը՝ երիտասարդ-թիւրքերը ստեղծեցին դժգոհների, բողոքողների մի ահագին խումբ, և կուսակցութիւնը ինքն իր մէջ պառակտվեց։ Եւ այն ժամանակ, երբ երկրին և պետութեանն սպառնում է արտաքին վտանգը, ներսում կուսակցութիւնները իրար դէմ ծառացած՝ աշխատում են իրար տապալել, իրար կործանել, իսկ ներքին նահանգներում աւազակախմբերը, կեղեքիչները նորից գլուխ են բարձրացրել և ժողովուրդը նորից մատնվել է ահ ու սարսափի։

Եւ երբ երիտասարդ-թիւրքերի կործանարար գործունէութիւնը մտրակող բալկանեան կօմիտէտը, բաղկացած դժգոհ և ընդդիմադիր տարրերից, հրատարակելով մի կոչ, ասում է, թէ «խոստացված բարենորոգումները ոչ մի տեղ դեռ չեն իրագործված և առհասարակ դրութիւնը ամենևին չէ լաւացել համեմատած նախկին րեժիմի դրութեան հետ», երիտասարդ-թիւրքերի պարագլուխ Ահմէդ Րիզան այդ կոչի դէմ հրատարակած իր պատասխանի մէջ աշխատում է ամեն բանի մէջ մեղադրել Եւրոպային և Թիւրքիայի ազգութիւնները. «Թիւրքիան բնակված է ապերախտ և բթամիտ ազգութիւններով,—ասում է նա.—Նրանք այնքան կեղտոտվել և թմրել են կեանքի մէջ բռնակալութեան լծի տակ, որ երբ երևաց իսկական ազատութիւնը, նրանք չեն կարողանում հասկանալ այդ ազատութիւնը և ըմբռնել նրան, չեն կարողանում յարմարվել նոր սահմանադրական և ամենքի համար հաւասար կարգերին»։

Ապա Ահմէդ-Րիզան մեղադրում է Եւրոպային և մանաւանդ Անգլիային, որոնք ոչ միայն չօգնեցին Թիւրքիային՝ րեֆօրմները իրագործելու, այլ և միացան՝ նրա դէմ, խափանելու րեֆօրմները։

Եւ երբ ժամանակակից Թիւրքիայի վարիչները այդքան կուրացած են, որ փոխանակ իրանց թերութիւնները և յանցանքը նկատելու և ուղղելու, մեղադրում են իրանց երկրի ժողովրդին և եւրոպական պետութիւններին, չը պէտք է զարմանալ, որ շատերը կարծում են, թէ «հիւանդ մարդը» բնաւ առողջանալու յոյս չէ ներշնչում։

Հ. Ա.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Գերմանական պալատական շրջանների օրգան «Post»-ը երկրի փրկութիւնը պատերազմի մէջ է տեսնում։ Լրագիրը թախանձում է Վիլհէլմ կայսրին «հրաժարվել միապետութեան վիրաւորված պրեստիժը խաղաղութեամբ բարձրացնելու պատրանքից։ Միմիայն պատերազմը կը ցրէ միապետի և երկրի միջև ստեղծված թիւրիմացութիւնը»։

◆ Ներկայումս Պետերբուրգումն են գտնվում Ռոստովի Դ/վ. և Նովոչերկասկի կողմից գնացած պատգամաւորութիւնները, որոնք զինւորական և առևտրի մինիստրներից խնդրեցին իրագործել համալսարանի խնդիրը։

◆ 1912 թ. յունվ. 2-ին I-ին խաղարկութեան ժամանակ 200,000 ր. գումարը ընկաւ այն տոմսին, որ Կիեւի Ցէյտլին և Գրինբէրգ ֆիրմայի գործակատարներ Շկլեարևսկին և Մոտիլևսկին գնել էին Լանդաու և ընկ. բանկից, վճարելով տոմսի գնի 1/10-րդ մասը։ Այնպէս որ՝ յիշեալ 200,000 րուբլուց այդ երկու երիտասարդներին բաժին է ընկել 20,000 րուբլի։

◆ «Р. С.»-ին հեռագրում են Լոնդոնից, որ Անգլիան և Ռուսաստանը որոշել են ընդհանուր հովանաւորութիւն հաստատել Պարսկաստանի վրա։

◆ Որովհետև Եապոնիան գրաւեց Մուկդէնը, Տոկիոյի չինական միսիան խզեց դիւանագիտական յարաբերութիւնները Եապոնիայի հետ։

◆ Անիշխանութեան ու գիւղացիների քայքայման պատճառով Պարսկաստանի Մազանդարան և Բուրուջիրդ նահանգներում սով է սկսվում։

◆ Ռուսաց զինւորական իշխանութիւնները յայտնել են Թաւրիզի բնակիչներին, որ մինչև յունվարի 24-ը բոլոր զէնքերը յանձնված պիտի լինեն Այլապէս կը սկսվեն խիստ խուզարկութիւններ և յանցաւորները պատժվելու են։

◆ Մորգան Շուստէրը Պարիզում «Р. Сл.»-ի թղթակցին յայտնել է, թէ կուսակցական երկպառակութիւնները կործանում են Պարսկաստանը։ Սակայն եւրոպական կրթութիւն ստացած պարսիկները կարող կը լինեն երկիրը դնել առաջադիմութեան ուղիի վրա, եթէ միայն դրան արգելք չը լինեն «առանձին պայմաններ»։

◆ Բաշտում կախաղան բարձրացրին պատերազմական դատարանի վճռով 4 հոգու։

◆ Թիւրքաց զինւորական մինիստրութիւնը որոշել է ուժեղացնել զօրքերը պարսկական սահմանագլխում և պատուիրագրել է առանձին զօրամասերի հրամանատարներին որևէ հրացանաձգութեան դէպքում սահմանագլխին՝ օգնութեան կանչել լրացուցիչ զօրքեր։

◆ Թիւրքիայում սկսվել է ամենուրեք ազգայնական շարժում, ուղղված՝ երիտասարդ-թիւրքերի ազդեցութիւնը թօթափելու։

◆ «Р. С.»-ին հեռագրում են Տրիպոլիից, որ Գարգարէշի մօտերը տեղի ունեցած կռւի մէջ իտալացիները կորցրին 900 սպանված։ Թիւրքերը գրաւեցին 10 իտալական թնդանօթ և 300 գերի վերցրին։

◆ Իտալիան ներկայումս Տրիպոլիսում ունի 109,309 զինւոր և 6102 օֆիցէր, 5600 ձի և 9200 ջորի։ Զօրքի վրա օրական ծախսվում է 2 միլիօն լիր։

◆ Պարիզում ժողովուրդների իրաւունքների միջազգային լիգայի մէջ են Անատոլ Ֆրանս, Ֆրեդերիկ Պասսի և այլն։ Անդամ են գրվել նաև այլ երկրներից աչքի ընկնող գործիչներ՝ Էմիլ Վենդերվէլդէ, Գէորգ Բրանդէս, Էմիլ Վերհարն և շատ ուրիշները։ Լիգայի նպատակն է առանց բողոքի չը թողնել առանձին ժողովուրդների իրաւունքների խախտումը, որտեղ էլ որ դրանք տեղի ունենան։

◆ Բերմինգհամում բանւորական կուսակցութեան կոնգրէսը բողոքեց անգլիական կառավարութեան՝ Պարսկաստանում վարած քաղաքականութեան դէմ։

◆ Չին հանրապետականները որոշել են վերականգնել Չինաստանի գերիշխանութիւնը Մոնգոլիայի վրա։

◆ Ուանշիկայը կառավարութեան անունից խնդրեց մեծ պետութիւնների դեսպաններին աջակցել յանձնելու մոնգոլական հարցը Հաագայի դատարանի քննութեան։

◆ Չինական կառավարական զօրքերը դուրս եկան Պէկինից յեղափոխականներին ընդառաջ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

18 յունվարի

ԲՐՈՒՍԷԼ։ Շաքարի կոնֆերէնցիայի նիստերը ընդհատվեցին երկու օրով, որպէսզի Գերմանիայի և Ռուսաստանի պատգամաւորները յարաբերութեան մէջ մտնեն իրանց կառավարութիւնների հետ և հրահանգներ ստանան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Աուգսբուրգէր և Նիւրընբէրգ ակց. ընկերութեան մեքենաների գործարանում պայթումից սպանվեցին ու վիրաւորվեցին 11 մարդ։

Բեսարաբիայի նահանգական պարագլուխ Կրուպէնսկին արձակվեց պաշտօնից՝ համաձայն խնդրագրի։

ԲԵԼԳՐԱԴ։ Թատրօնում ներկայացման ժամանակ երիտասարդ Միլէտիչը ատրճանակի երկու հարուածով սպանեց իր և իր հարազատների հետ օթեակում նստած պետական պաշտօնեայ Պավլօվիչի աղջկան և երրորդ գնդակով մահացու վիրաւորեց ինքն իրան։ Սպանութիւնը սիրային հողի վրա է։

ՕԴԵՍՍԱ։ Առևտրի մինիստրութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ իշխան Ամատունու նախագահութեամբ սկսվեցին խորհրդակցութիւններ ռուս-դանիական նաւագնացութիւնը ընդլայնելու հարցի մասին։

ՄՕԳԻԼԵՎ։ Երդուեալ ատենակալները արդարացրին Գոմէլի բժիշկներ Զախարինին և Խէյֆեցին, որոնք պահում են ծննդաբերութեան ապաստարան ու մանկավարձութեան դպրոց և մեղադրվում էին արհեստական վիժումներ առաջ բերելու մէջ։

ՍԱՐԱՏՕՎ։ Այրվեց Բօգօսլօվսկիի ջրաղացը։ Վնասը 500,000 րուբլի է։

ՊԱՐԻԶ։ Մի չարագործ փողոցում յարձակվեց մի ընկերութեան գանձապահի վրա, պղպեղ ցանեց աչքերի մէջ և յափշտակեց 150,000 ֆրանկ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական Խորհուրդը ընդունեց ֆինն քաղաքացիների իրաւունքները միւս ռուսահպատակների իրաւունքների հետ հաւասարեցնելու օրինագիծը Դումայի խմբագրութեամբ։

ՆՈՎՕՉԵՐԿԱՍԿ։ Դոնեան զօրաշրջանում ընդհանուր ուսում մտցնելու գործը իրականացնելու համար ժող. լուս. մինիստրութեան միջոցներից խնդրվում է փոխարինաբար աւելի քան 500,000 րուբլի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ԱՄԵՆ օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9—10 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներվային:
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՅ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Գ. Յ. ԳՈՒՐԴԺԷՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՅ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—5

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տելէֆօն 388.
(չ.ու.կ.) 761. 100—67

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(կ. չ. ու.) 669. 100—100

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագէտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտօվսկայա, № 66.
(ա.օ.) 130. 100—61

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Выпущены въ свѣтъ слѣдующіе новые труды
Н. В. АБРААМЯНА
I
Руководство Торговой Бухгалтеріи
въ связи съ нефтепромыш. и керосинозаводскимъ производствомъ по Двойной Италіанской системѣ.
Второе изданіе, дополн. и исправленное
Цѣна 2 р. 50 к.
II
Таблицы вычисленія процентовъ
отъ 1 до 360 дней, отъ 1 до 12% включ. и на всѣ капиталы отъ 1 до 10,000 руб.
Второе изданіе
Цѣна 85 коп.
III
Общедоступная Справочная Книжка
Для слушателей и слушательницъ Бухгалтерскихъ Курсовъ и занимающихся конторскимъ трудомъ.
Цѣна 30 коп.
Складъ изданій при Бухгалтерскихъ Курсахъ Н. В. АБРААМЯНА въ Тифлисѣ, Николаевская, 22. с. д. Выписывающіе непосредственно изъ склада за наложенный платежъ не платятъ.
(ու. կ. չ.) 30. 10—1

ՀՐԱՒԷՐ

1912 թ. կիրակի, յունվարի 22-ին, ցերեկվայ ժամը 11½-ին, Քամոյեան ս. Գէորգ նորակառոյց եկեղեցում կայանալու է ծխական արտակարգ ժողով։

ՕՐԱԿԱՐԳ

1) Եկեղեցու օծման խնդիր։
2) Եկեղեցու անունը փոխելու խնդիր։

Աչքի առաջ ունենալով որ սա երկրորդ ժողովն է և որ ժամանակը շատ սուղ է, պէտք է եկեղեցին օծվի մինչև Մեծ-Պասը, հոգաբարձութիւնս խնդրում է անպատճառ գալ ժողովի։

Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու
Հոգաբարձութիւն
(ու. կ.) 28. 2—1

Այնթափցի ՔԵՐՈԲԷ ՔԻՇԻՇԵԱՆԸ սրանով յայտարարում է, որ իր անհրորդի

Արմենակ Մանիշակեանը

բացակայում է իր ընտանիքից և որի որտեղ լինելը 7 տարիներից ի վեր յայտնի չէ նրա մերձաւորներին՝ մօրը և քրոջը։ Խնդրում է յիշեալ Արմենակ Մանիշակեանի տեղը իմացողներին հաղորդել նրա ընտանիքին այս հասցէով. ՏԱՃԿԱՍՏԱՆ. Այնթափ (Հալէպի նահանգ), Քերոբէ Քիշիշեանին, կամ Թիֆլիս, «Մշակի» խմբագրութեան։
2—2

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. և Մ.
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկօլայէվսկայա, № 36.
(ա.օ) 1212. 25 - 12

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ունկնդիրների թիւը լրացած լինելու պատճառով ընդունելութիւնը ընդհատված է, իսկ պատրաստական կուրսերում շարունակվում է։ 29. 1—1

Saxlehner, Bu
HUNYADI JANOS
BUDA
KESERÜVIZFORRÁS
HUNYADI JANOS
Bitterquelle
Gesetzlicher Markenschutz

ГУНЯДИ ЯНОСЪ
ՀԱՆՔԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԴԱՌՆ ՋՈՒՐ
ԱՄԵՆԱԼԱՒ ԼՈՒԾՈՂԱԿԱՆ
ՆՈՒՐԲ, ԴՈՒՐԵԿԱՆ ԵՒ ՈՒՂԻՂ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ
ՀՐԱՇԱԼԻ ՄԻՋՈՑ
սովորական եւ պատահական փորկապութեան ժամանակ, արիւնոտութեան,—չաղութեան, ստամոքսի խանգարման, լեարդի հիւանդութեան ժամ. եւ այլն։ Ցիանամեայ գործունէութիւնը ապացուցել է Գունեադի Եանոս Ջրի առաւելութիւնը այդօրինակ բոլոր Ջրերի վերաբերմամբ։
Վաճառվում է աշխարհիս բոլոր դեղատներում եւ դեղատ. խանութ.։
9—3
(M. 484763)



№ 4711 ՃԱՐՊԱՅԻՆ ՇՊԱՐԸ
իդէալական միջոց է կաշին ամենագեղեցիկ գոյնի հասցնելու համար։
Անփոխարինելի է որպէս պարահանդէսի, սալօնի և առհասարակ ամենօրեայ շպար։ Ամուր կպչում է կաշուն և միանգամայն անվնաս է։ Արկղիկը 30 կոպ.։ Գնելուց՝ ուշադրութիւն դարձնել, որպէսզի տրվի ձեզ իսկական «№ 4711 շպարը»։ № 4711 օրէնքով հաստատված է։
Ֆերդ. Միւլհէնս. Պարֆիւմէրիա № 4711
ԿԵՕԼՆ Ռ./վ. և ՌԻԳԱ: Մատ. Ն. Մ. Ռուսաց Պալատի։
(10) (M.28759/28782) 2—1

„ԿԱՎՐՕՇ“
Պօլսական-հումօրական երգիծաթերթը
ԵՐԿՕՐԵԱՅ
ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ
Կը զբաղի պօլսական բոլոր օրուան խնդիրներով և բսի-բասներով
Կը քաշքշէ, բայց... չի փրցներ։
Տարեկան՝ արտասահմանի համար՝ 25 ֆրանկ, վեցամսեայ՝ 15 ֆրանկ։
Հասցէ՝ „Gavroche“, Constantinople, Péra.
(և.) 25. 2—1

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1912 ГОДЪ
(III-й годъ изданія) на
ЖЕНСКОЕ ДѢЛО
ВЪ ТЕЧЕНІЕ 1912 г. ПОДПИСЧИКИ ПОЛУЧАТЪ:
24 иллюстрированныхъ номера по программѣ: публицистика, педагогика, гигіена, беллетристика, театръ и искусство, исторія, критика, библіографія, спортъ, отдѣлъ модныхъ туалетовъ (свыше 800 новѣйшихъ моделей), прикладное искусство и смѣсь.
2 сезонныхъ модныхъ альбома, одинъ весною, а другой осенью, куда войдутъ свыше 1200 послѣднихъ фасоновъ полнаго дамскаго и дѣтскаго гардероба съ подробнымъ описаніемъ всѣхъ фасоновъ.
6 выкроечныхъ листовъ, не менѣе 18 чертежей въ натурал. величину дамскихъ и дѣтскихъ вещей.
12 вырѣзныхъ выкроекъ новостей сезона въ натур. величину съ чертеж. и подр. наставленіями.
2 альбома изящныхъ рукодѣлій, куда войдутъ новѣйшіе виды женскихъ рукодѣлій съ необходимыми указаніями и разъясненіями.
1 полный курсъ шляпнаго искусства. Подробное изложеніе курса, дополненное множествомъ иллюстрацій. Эта книга—самоучитель появится впервые на русскомъ языкѣ въ нашемъ изданіи; она дастъ возможность каждой женщинѣ безъ посторонней помощи научиться шляпному искусству.
ПОДПИСНАЯ ЦѢНА НА ГОДЪ со всѣми приложеніями съ доставкой и пересылкой 5 рублей.
РАЗСРОЧКА ПЛАТЕЖА НЕ ДОПУСКАЕТСЯ.
Подписчики, желающіе получить сверхъ перечисленнаго полную энциклопедію женскихъ рукодѣлій (всѣ виды рукодѣлій съ подробнымъ пояснительнымъ текстомъ, около 40 печатныхъ листовъ, подраздѣленныхъ на 20 главъ, свыше 1000 иллюстрацій), доплачиваютъ къ подписной платѣ—2 р., т. е. переводятъ единовременно—7 рублей.—Желающіе-же получить полный курсъ кройки и шитья по новѣйшей упрощенной французской методѣ доплачиваютъ—1 рубль. Въ отдѣльности „Энцикл. женск. рукодѣлій“ стоитъ съ перес. 3 р. 40 коп., а „Курсъ кройки и шитья“—2 р. 30 к.
Подписка принимается во всѣхъ почтово-телеграфныхъ конторахъ и въ книжныхъ магазинахъ.
Главная контора журнала „ЖЕНСКОЕ ДѢЛО“, Москва, Кузнецкій пер., 3.
3—3 1206. (10, 20)

Ընդ մամլով է եւ շուտով լոյս կը տեսնէ
ՅՈՒՇԱՐՁԱՆ
ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՅ
առթիւ
100-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ի ՎԻԵՆՆԱ
1811—1911
ԵՒ
25-ԱՄԵԱՅ ՏԱՐԵՇՐՋԱՆ
„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ
1887—1911
Հրատարակեալ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ
Մասնակցութեամբ
ԱՇԽԱՏԱԿՑԱՑ «ՀԱՆԴԷՍԻ» ԵՒ ՀԱՅԵՐԷՆԱԳԷՏ ԲԱՆԱՍԻՐԱՑ
«Յուշարձանը»՝ կարևոր և ճոխ բովանդակութեամբ նուիրուած է 50-ամեայ յոբելինաւոր գեր. վեր. Գրիգոր արքեպ. Գովրիկեանի և կը բաղկանայ երկու մասերէ։
1) Ակնարկ մը Վիեննական Մխիթարեան Միաբանութեան հարիւրամեայ գործունէութեան վրայ, ուր «Հանդիսի» խմբագրութեան կողմանէ համառօտ գծերով կը պատկերանան Միաբանութեան ծնունդն ու յաջորդութիւնը, գրական գործունէութիւնը՝ նշանաւոր գրական գործիչներու ամփոփ կենսագրականներով և լուսանկարներով, տպարանը, մատենադարանը, թանգարանը եւ «Հանդէս Ամսօրեայի» պատմութիւնը՝ խմբագրապետներու կենդանագիրներով։ Ապա հայր Գ. վ. Մենէվիշեան կը գծէ «Հանդէս Ամսօրեայի կեանքը», հետաքրքրական բովանդակութեամբ։
2) Գրական ժողովածոյ. այս մասը ամբողջապէս նուիրուած է՝ զուտ մասնագիտական յօդուածներով՝ հայ հին և նոր գրականութեան, հնախօսութեան, եկեղեցական և աշխարհիկ պատմութեան, բանասիրութեան, լեզուագիտութեան, ազգագրութեան, արուեստի և կենսագրականի, «Հանդիսի» ականաւոր գործիչներու և եւրոպացի հայերէնագէտ պրոֆեսորներու ազնիւ մասնակցութեամբ։ Փոքրիկ գաղափար մը կազմելու համար նիւթերու առատութեան, պէսպէսութեան և հետաքրքրական բովանդակութեան՝ յառաջ կը բերենք ուսումնասիրութեանց ցանկը կարգաւ.
ՅՈՒՇԱՐՁԱՆԸ՝ գրեթէ 500 մեծադիր էջ («Հանդիսի» դիրքով)՝ տպագրուած է մաքուր, ողորկ թղթի վրայ՝ տպագրական մեծ խնամօք, զարդարուած գրական ժողովածուի աշխատակիցներու և այլ մասնագիտական իրաց բազմաթիւ լուսանկարներով (60) և երեք լուսատիպ տախտակներով, որոնք պիտի ընծայեն միևնոյն ժամանակ ամեն հայասէր աչաց գեղեցիկ և բազմազան ալբոմ մը։
Որովհետև ՅՈՒՇԱՐՁԱՆԸ շատ սակաւաթիւ տպագրուած է և իր բազմալեզուեան բովանդակութեամբ նաև եւրոպացի հասարակութեան (համալսարաններու, մատենադարաններու...) համար հետաքրքրական պիտի ըլլայ՝ կրնայ շուտով սպառում գտնել. ուստի պարտք կը համարենք այժմէն ուշադիր ընել ամեն հայ գրասէր հաստատութիւններն և անհատները, որ փութան օր յառաջ ապսպրել անկէ օրինակ մը՝ նշանաւոր կեդրոններու, ընթերցարաններու և սեփական գրադարաններու համար։
ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ գինն է՝ ամեն երկրի համար՝ ճանապարհածախքը մեր վրայ՝
Թղթակազմ. . . . 40 ֆր. = 16 րուբլի = 8 դոլար
Կիսակաշի . . . . 45 » = 18 » = 9 »
«Հանդիսի» 1911 և 1912 տարիներու վճարող բաժանորդաց համար՝
Թղթակազմ. . . . 30 ֆր. = 12 րուբլի = 6 դոլար
Կիսակաշի . . . . 35 » = 14 » = 7 »
ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ զուտ շահը պիտի յատկացուի «Հանդէս Ամսօրեայի» դրամագլխոյն։
Դիմել՝ Rédaction de la Revue „Handes Amsorya“, Vienne (Autriche), VII/2 Mechitharistengasse 4.
(ու.) 15. 4—2

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկ., բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն), բ) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) սղագրութիւն. 3) դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և ուր.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թիւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
(ա. օ.) 1193. 0—18

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.